

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

ԳԵՐԱՇՆՈՐՀ

Տ. ԵՂԻՇԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ,
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ

Լոս-Անժելոս

Հաճեցեք Մեր անունով ողջունել բացումը ազգային հերոս Սողոմոն Թեհլերյանի հուշարձանին, այսօր կիրակի 31 օգոստոսին:

Սողոմոն Թեհլերյան, անուն մը նվիրական համայն հայության համար անխտիր որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Անուն մը խորհրդանիշ քաջության, արդարության և ազատության ոգիի: Անուն մը՝ հայոց առավել պայծառ ապագան շեփորող: Անուն մը՝ բոլոր հայերուն հրավեր կարդացող որ մնան հավատարիմ հայրենի հողին, մեկ սիրտ մեկ հոգի, հավետ անբաժան իբրև զավակները մեր անմահ ազգին:

Վերածնած Մայր Հայաստանեն, Արարատեն և Սարդարաբադեն և սուրբ Էջմիածնեն օրհնություն և փառք Թեհլերյանի սուրբ հիշատակին:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

30 օգոստոս 1969 թ.,
Մայր Աթոռ ս. Էջմիածին